

Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Ն Ե Ր

Տուի մարդերուն ինչ որ ունէի,
Սէր, բերկրանք, ժրպիտ,
Անոնց փոխարէն ընդունեցի լուկ
Քարեր կարծրապինդ:

Մակայն կրցի ես հոգիիս բոցով
Փոխակերպելու
Քարերը մարդոց, ուսրէն ծընած
Մարգարիտներու:

Հարուս եմ նորէն, չեմ ցաւի բընաւ
Տուածիս համար,
Հոգին բախուելով կը հարչսանայ,
Քաղցր ու անալլալ:

Վ Ե Ր Զ Ա Լ Ո Յ Ս

Պահէ հոգիիդ մեղեդին անուշ,
Օրերուն աւնան, օրերուն տգոյն,
Երբ արցունքները վար իյնան շիթ շիթ,
Անցնող օրերու կոկիծէն հալած:

Դարունն պէ՛տք չունի երգի, ցնծութեան,
Ի՛ր ծաղիկները, կոկոններն աղուոր,
Վաղուան յոյսերուն են գրուական,
Ժպիտը ինչպէս կոյսի երթներուն:

Պահէ հոգիիդ երգը արծաթեայ,
Վերջալոյսին դէմ օրերուն գալիք,
Երբ ամէն վայրկեան սիրտը կը դողայ
Յիշատակներու սըլաքէն խայթիչ:

ԵՂԻՎԱՐԴ

